ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 91/09

Քաղ. Երեւան 22 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2009թ. դեկտեմբերի 22-ի նիստում (արձանագրություն N75/5) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Պետրոսյանի 2009թ. դեկտեմբերի 3-ի դիմումը IR 961965 «Oerlikon solar» բառային ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 6,9,11,37 եւ 42-րդ դասերի ապրանքների եւ ծառայությունների համար մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

2009թ. սեպտեմբերի 30-ի կրկնական փորձաքննության արդյունքի որոշվել է, որ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 12.3-րդ, 90.1-րդ կետերի համաձայն «SOLAR» բառն ինքնուրյուն պահպանության օբյեկտ չէ, քանի որ այն նշում է ապրանքների ստեղծման նպատակը եւ ծառայությունների մատուցման ոլորտը:

Բողոքարկողը իր անհամաձայնությունն է հայտնել կրկնական փորձաքննության որոշման վերաբերյալ, նշելով իր առարկությունը փորձաքննության փաստարկների վերաբերյալ, հիմնավորելով որ 6, 9, 11, 37 եւ 42-րդ դասերում նշված մի շարք ապրանքների եւ ծառայությունների համար եւս «Solar» բառը, որը հայերեն նշանակում է «արեգակնային» չի նշում ո՛չ ապրանքի տեսակը, ո՛չ էլ ապրանքի ստեղծման նպատակը:

Բողոքարկողը խնդրում է անվավեր ճանաչել կրկնական փորձաքննության որոշումը եւ գրանցել նշանը՝ առանց «solar» բառն ինքնուրույն պահպանությունից հանելու հիշյալ դասերում նշված որոշ ապրանքների եւ ծառայությունների համար։

Բերված հիմքերի տեսակյունից ուսումնասիրելով բողոքի պահանջը, կոլեգիան գտնում է, որ, «SOLAR» բառն ինքնուրյուն պահպանության օբյեկտ չէ 6-րդ, 9-րդ, 11-րդ, 37-րդ 42-րդ դասերի եւ ծառայությունների համար։

Քննարկելով ներկայացված նյութերը, բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, ինչպես նաեւ հաշվի առնելով կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետեւյալ եզրակացության.

- ղեկավարվելով «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի, «SOLAR» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ 6-րդ, 9-րդ, 11-րդ, 37-րդ 42-րդ դասերի ապրանքների եւ ծառայությունների համար, քանի որ այն նշում է ապրանքների ստեղծման նպատակը եւ ծառայությունների մատուցման ոլորտը։

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի 68-րդ կետի «2» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Oerlikon solar» ընկերության ներկայացուցիչ՝ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Պետրոսյանի 2009թ. դեկտեմբերի 3-ի բողոքը եւ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ։

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում։

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան